Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու
առաջարկությունների վերաբերյալ
31.03.2012թ. դրությամբ

1. Ստացվել են դիմումներ ընդամենը՝ 6874
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	1619	23.4
դիմում	2626	38.2
բողոք	2629	38.3
կրկնակի	302	4.3
կոլեկտիվ	36	0.5

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ 1854

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	1274	68.7
բողոք	580	31.2

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	125	1.8
կոմունալ-կենցաղային	16	0.2
շինարարական	64	0.9
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	3	0.04
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	224	3.2
առողջապահության	19	0.2
կրթական և մանկ. հիմն.	31	0.4
գիտութ. կուլտուրա	3	0.04
ֆինանսական	2252	32.7
օրենսդրական	113	1.6
քաղ. և որդեգրման հաշվառման	66	0.9
աշխ. և աշխատավարձի	315	4.5
ապարատային		
այլ հարցեր	3605	52.4
սեփականաշնորհում	38	0.5

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2012Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 6874 նամակներից մոտ 23.4%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 38.3%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 38.2%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 32.7%-ն առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 4.5%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումներ (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումներ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 1.8%-ը առնչվում է բնակարանային, 0.2%-ը կոմունալ-կենցաղային, 0.9%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 52.4% դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 6531-ին տրվել է գրավոր, իսկ 267-ին բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 76-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն